

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

07.12.2021 17:46



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը հյուերընկալել է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարության Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության համագործակցության ծրագրերի բաժնի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վարչության պատվիրակությանը:

Այցելության նպատակն էր քննարկել Հայաստան-Եվրոպայի Խորհրդի 2019-2022թթ. գործողությունների ծրագրի՝ ԵՄ համակարգմամբ իրականացվող տարածաշրջանային ծրագրերի ընթացքը, ինչպես նաև նախատեսվող առաջիկա համագործակցությունը:

Պատվիրակության կազմում էին Եվրոպայի Խորհրդի Երևանյան գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտը, համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավար Լիլյա Գրետարստոդիբը, համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավարի տեղակալ Լիլիթ Դանեղյանը և ծրագրի ղեկավար Կարեն Կարապետյանը:

ՀՀ փաստաբանների պալատը, արժևորելով փոխհամագործակցության նմանատիպ այցերը, բարձր է գնահատում Եվրոպայի Խորհրդի դերը մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև փաստաբանական ինստիտուտի զարգացման նպատակով միջազգային լավագույն փորձի ներդրմանն ուղղված քայլերը:

